# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ
համայնք, Հեռ. ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Առինջ, Հեռ. (010) 61 45 01
, E-mail arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

N 452
*14 դեկտեմբեր 2016թ.*

***ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ***
***ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ՝ ԿԱՐԱՊԵՏ ԳՈՒԼՈՅԱՆԻՆ***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի, Ձեզ ենք ներկայացնում Կոտայքի մարզի Առինջ համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 15 հերթական նիստի որոշումները, էլեկտրոնային տարբերակով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Բարսեղյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ
ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 62-Ա

## ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջը. ***Համայնքի ավագանին որոշում է՝***

Հաստատել Առինջ համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 15 հերթական նիստի օրակարգը.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնքի վարչական տարածքում 2017թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին

2.Առինջ համայնքի ղեկավարի 2017թվականի վարձատրության չափը սահմանելու մասին

3.Կոտայքի մարզի Առինջի համայնքապետարանի աշխատակազմի 2017թվականի աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

4.Կոտայքի մարզի Առինջ համայնքի «Անահիտ Ծառուկյանի անվան բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2017թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

5.Կոտայքի մարզի Առինջ համայնքի «Առինջ համայնքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2017թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

6.Առինջ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի քանակական և անհատական կազմը հատատելու մասին

7.Առինջ համայնքի 2017-2021թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին

8.ՀՀ Կոտայքի մարզի Առինջ համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 21-ի N48-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

9.Առինջ համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու մասին

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱՐՍԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

2.ԱՐԹՈՒՐ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ

3.ԳԱՅԱՆԵ ՊԱԼՅԱՆ

4.ԳՐԵՏԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

5.ԼԱՈՒՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ

6.ՆԵԼԼԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ

7.ՍԱՀԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

8.ՍԵՐՈԲ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

9.ՖԼՈՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 63-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածները և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածը. ***Համայնքի ավագանին որոշում է՝***

1.Առինջ համայնքի վարչական տարածքում 2017թվականի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը, համաձայն հավելվածի:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱՐՍԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
2.ԱՐԹՈՒՐ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ
3.ԳԱՅԱՆԵ ՊԱԼՅԱՆ
4.ԳՐԵՏԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
5.ԼԱՈՒՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ
6.ՆԵԼԼԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ
7.ՍԱՀԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
8.ՍԵՐՈԲ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
9.ՖԼՈՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

*Հավելված*
*Առինջ համայնքի ավագանու*
*2016թ. դեկտեմբերի 8-ի թիվ 63-Ն որոշման*

# ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| 2/2 | Տուրքերի տեսակները | Օրենքով սահմանված դրուքաչափերը | Ավագանու սահմանած դրույքաչափերը |
|---|---|---|---|
| 1 | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղական) թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է՝ | | |
| | հիմնական օբյեկտների համար՝ | | |
| | 1)մինչև 300քմ. Ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական(ամառանոցային) տների,ինչպես նաև մինչև 200քմ. ընդհանուր մակերես ունեցող հասարակական արտադրական նշանակության օբյեկտների համար՝ | 0-15000դ. | 7500դ. |
| | 2)սույն կետի <<1>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝ | | |
| | ա.201-ից մինչև 500քմ.ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 0-30000դ. | 15000դ. |
| | բ. 501-ից մինչև1000քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 0-50000դ. | 25000դ. |
| | գ. 1001-ից ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝մինչև 3000 | 0-50000դ. | 25000դ. |
| | դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 0-100000դր | 50000դր |
| | ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝ | | |
| | ե .մինչև 20քմ.ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 0-3000դ. | 1500դ. |
| | զ. 20քմ.և ավել ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 0-5000դ. | 2500դ. |
| 2. | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման,արդիականացման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի)համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով | | |
| | 1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերին ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն | 3000դ. | 1500դ. |
| | 2) բացի օբյեկտների վերակառուցման,ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների , վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերին ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն,ապա բացի սույն կետի 1 ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սահմանված սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմեր՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով | | |
| | 3)Նախատեսվում և միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերին ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր | | |

| | | | |
|---|---|---|---|
| | շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը | | |
| 3. | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար | 5000դ. | 2500դ. |
| 4. | Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝ | | |
| | 1) Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | | |
| | ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | Մինչև 10001դ. | 5000դ. |
| | բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | Մինչև 13001դ. | 7400դ. |
| | գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | Մինչև 20001դ | 9000դ |
| | դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | Մինչև 25001դ | 14000դ |
| | ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | Մինչև 45001դ | 21000դ |
| | զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | Մինչև 100001դ | 45000դ |
| | 2) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | | |
| | ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | Մինչև 10001դ. | 4000դ. |
| | բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | Մինչև 13001դ | 5200դ. |
| | գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | Մինչև 20001դ | 8000դ |
| | դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | Մինչև 25001դ | 10500դ |
| | ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | Մինչև 45001դ | 20000դ |
| | զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | Մինչև 100001դ | 40000դ |
| 5. | Համայնքի տարածքում՝ | | |
| | 1)բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար, 1քմ .-ի համար | 0-350դ. | 150դ. |
| | 2)Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ սեղմված բնական, կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության ընթացիկ տարվա համար | 150000-200000դ. | 150000դ. |
| | 3)Խանութներում,կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար | 30000-60000դ. | 30000դ. |
| | 4)Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝<br>Հիմնական շինությունների ներսում՝ | | |
| | ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | Մինչև 5001դ | 2000դ |

| | | | |
|---|---|---|---|
| | բ.26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | Մինչև 10001դ. | 4000դ |
| | գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | Մինչև 15001դ | 6000դ |
| | դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | Մինչև 20001դ | 8000դ |
| | ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | Մինչև 30001դ | 12000դ |
| | զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | Մինչև 50001դ | 20000դ |
| | Ոչ հիմնական շինությունների ներսում՝ | | |
| | ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | Մինչև 1001դ | 600դ |
| | բ.26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | Մինչև 2001դ | 1200դ |
| | գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | Մինչև 4001դ | 2400դ |
| | դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | Մինչև 8001դ | 5000դ |
| | ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | Մինչև 15001դ | 9000դ |
| | զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | Մինչև 25001դ | 15000դ |
| | 5)համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առքուվաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր տարվա համար . | 50000դ. | 50000դ. |
| 6. | համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները(սաունաները), խաղատները՝ ժամը $24^{00}$-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար | | |
| | 1)առևտրի օբյեկտների համար | 25000-50000դ. | 25000դ. |
| | 2)հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար | 50000-100000դ. | 50000դ. |
| | 3)բաղնիքների (սաունաների) համար | 200000-500000դ. | 200000դ. |
| | 4)խաղատների կազմակերպման համար | 500000-1000000դ. | 500000դ. |
| | 5)շահումով խաղերի կազմակերպման համար | 250000-500000դ. | 250000 դ. |
| | 6)վիճակախաղերի կազմակերպման համար | 100000-150000դ. | 100000դ. |
| 7. | Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի համար՝ | | |
| | 1)ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար | 1000-2000դ. | 1500դ. |
| | 2)թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ | 2500-3500դ. | 3000դ. |
| | 3)այլ արտաքին գովազդի համար՝ | 500-1500դ. | 1000դ. |
| | 4) Սոցիալական գովազդի համար՝ | 0դ. | 0դ. |
| 7.1 | Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով: | | |

| | | | |
|---|---|---|---|
| .2 | Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան: | | |
| 8. | Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար ընթացիկ տարվա համար՝<br>Համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է | 0-10000դ.<br><br>50000-100000դր. | 2000դ.<br><br>50000դր. |
| 9. | Համայնքի տարածքում մարդատար տաքսու(բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար | 0-10000դ. | 10000դ. |
| 10. | Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարման ծառայություններ իրականցնելու և(կամ)մատուցելու թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանվում է | 0-500.000 | 150000դ. |
| 11. | Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝ | | |
| | 1)3հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար | | 2500000դ. |
| | 2) 5հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար | | 5000000դ. |
| | 3) 7հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար | | 7000000դ. |
| | 4) 10հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար | | 10000000դ |
| 12. | ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ | | |
| | 1)Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքները կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար,տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխ հատուցման վճար | | 10000դ. |
| | 2)Տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինման և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու , հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխ հատուցման վճար | | 4000դ. |
| | 3)Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցների վճար | | 3000դ. |
| | 4) Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել | | |
| | ա.կենցաղային աղբի համար՝ըստ հաշվառված անձանց քանակի համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ամսեկան | | 200դ. |
| | բ.Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի մեկ խորանարդ մետրի համար՝ | | 2500դ. |
| | 6)Համայնքի վարչական տարածքում շինարարական աղբի հավաքման և փոխադրման համար տեղական վճարի դրույքաչափը սահմանել | | 500դ. |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 64-Ա

## *ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՎՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթներով. ***Համայնքի ավագանին որոշում է՝***

1. Համայնքի ղեկավարի աշխատավարձը սահմանել 330000 /երեք հարյուր երեսուն հազար/ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017թվականի հունվարի 1-ից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2015թվականի դեկտեմբերի 3-ի «Առինջ համայնքի ղեկավարի 2016թվականի վարձատվության չափը սահմանելու մասին» թիվ 40-Ա որոշումը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐՍԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
2. ԱՐԹՈՒՐ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ
3. ԳԱՅԱՆԵ ՊԱԼՅԱՆ
4. ԳՐԵՏԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
5. ԼԱՈՒՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ
6. ՆԵԼԼԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ
7. ՍԱՀԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
8. ՍԵՐՈԲ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
9. ՖԼՈՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ՀՎՀՀ 03504156

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 65-Ա

***ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասին 26-րդ կետի պահանջներով.***Համայնքի ավագանին որոշում է՝***

1.Հաստատել Կոտայքի մարզի Առինջի համայնքապետարանի աշխատակազմի 2017թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը, համաձայն հավելվածի:

2.Անհրաժեշտությունից ելնելով թույլատրել համայնքի ղեկավարին կնքել աշխատանքային պայմանագրեր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017թվականի հունվարի 1-ից:

4.Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2015թվականի դեկտեմբերի 3-ի «Կոտայքի մարզի Առինջի գյուղապետարանի 2016թվականի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին»թիվ 41-Ա որոշումը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱՐՍԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
2.ԱՐԹՈՒՐ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ
3.ԳԱՅԱՆԵ ՊԱԼՅԱՆ
4.ԳՐԵՏԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
5.ԼԱՈՒՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ

6.ՆԵԼԼԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ

7.ՍԱՀԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

8.ՍԵՐՈԲ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

9.ՖԼՈՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Առինջ համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 8-ի N-65Ա որոշման

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ
# ԱՌԻՆՋԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2017Թ

Աշխատակիցների թվաքանակը՝ 18

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելում ը | Հավելավճարը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Համայնքապետարանի աշխատակազմ | Համայնքի ղեկավար | Քաղաքական | - | 1 | 330000 | | - | 330000 |
| 2 | | Համայնքի ղեկավարի տեղակալ | Հայեցողական | - | 1 | 268700 | | - | 268700 |
| 3 | | Համայնքի ղեկավարի օգնական | Հայեցողական | - | 1 | 120000 | | - | 120000 |
| 4 | | Աշխատակազմի քարտուղար | Համայնքային ծառայության | 1.2-1 | 1 | 240000 | | 24000 | 264000 |
| 5 | | Գլխավոր մասնագետ | Համայնքային ծառայության | 2.3-1 | 1 | 228200 | | 22820 | 251020 |
| 6 | | Գլխավոր մասնագետ | Համայնքային ծառայության | 2.3-2 | 1 | 228200 | | 22820 | 251020 |
| 7 | | Գլխավոր մասնագետ | Համայնքային ծառայության | 2.3-3 | 1 | 228200 | | 22820 | 251020 |
| 8 | | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-2 | 1 | 186400 | | 18640 | 205040 |
| 9 | | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-3 | 1 | 186400 | | 18640 | 205040 |
| 10 | | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-4 | 1 | 186400 | | 18640 | 205040 |
| 11 | | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-5 | 1 | 186400 | | 18640 | 205040 |
| 12 | | 1-ին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.2-1 | 1 | 180950 | | 18095 | 199045 |
| 13 | | 2-րդ կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.3-1 | 1 | 104550 | | 10455 | 115005 |
| 14 | | 2-րդ կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.3-2 | 1 | 104550 | | 10455 | 115005 |
| | | Անասնաբույժ | Քաղաքացիական աշխատանք | - | 1 | 140000 | | | 70000 |
| 15 | | Հավաքարար | Տեխնիկական սպասարկման | - | 2 | 100000 | | - | 200000 |
| | | Վարորդ | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 190000 | | - | 190000 |
| | Ընդամենը | | | | 18 | 3208950 | | 206025 | 3444975 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 66-Ա

**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՆԱՀԻՏ ԾԱՌՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2017ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի պահանջներով.***Համայնքի ավագանին որոշում է՝***

1.Հաստատել Կոտայքի մարզի Առինջի «Անահիտ Ծառուկյանի անվան բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2017թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը, համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017թվականի հունվարի 1-ից:

3.Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2015թվականի դեկտեմբերի 3-ի «Առինջի «Անահիտ Ծառուկյանի անվան բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին » թիվ44-Ա որոշումը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱՐՍԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
2.ԱՐԹՈՒՐ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ
3.ԳԱՅԱՆԵ ՊԱԼՅԱՆ
4.ԳՐԵՏԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
5.ԼԱՈՒՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ
6.ՆԵԼԼԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ
7.ՍԱՀԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
8.ՍԵՐՈԲ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
9.ՖԼՈՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Առինջ համայնքի ավագանու
2016թվականի դեկտեմբերի 8-ի N66-Ա
որոշման

## ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

## ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՆԱՀԻՏ ԾԱՌՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2017Թ.

Աշխատակիցների թվաքանակը՝ 17

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելումը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 9 |
| 1 | „Անահիտ Ծառուկյանի անվան բժշկական ամբուլատորիա„ | Տնօրեն | վարչական | 1 | 181000 | | 181000 |
| 2 | | Հաշվապահ-օպերատոր | վարչական | 1 | 174000 | | 174000 |
| 3 | | Ընտանեկան բժիշկ | բժիշկ | 2 | 315000 | | 630000 |
| 4 | | Գինեկոլոգ | բժիշկ | 1 | 119775 | | 119775 |
| 5 | | Ատամնաբույժ | բժիշկ | 1 | 72751 | | 72751 |
| 6 | | Ընտանեկան բուժքույր | Միջին բուժանձնակազմ | 2 | 79800 | | 159600 |
| 7 | | Ընտանեկան բուժքույր | Միջին բուժանձնակազմ | 1 | 74000 | | 74000 |
| 8 | | Ընտանեկան բուժքույր | Միջին բուժանձնակազմ | 1 | 81400 | | 81400 |
| 9 | | Թերապևտիկ բուժքույր | Միջին բուժանձնակազմ | 1 | 77903 | | 77903 |
| 10 | | Դպրոցի բուժքույր | Միջին բուժանձնակազմ | 1 | 72751 | | 72751 |
| 11 | | Սանիտար | Կրտսեր բուժանձնակազմ | 1 | 72751 | | 72751 |
| 12 | | Վարորդ | Այլ անձնակազմ | 1 | 106000 | | 106000 |
| 13 | | Պահակ | Այլ անձնակազմ | 1 | 72751 | | 36375 |
| | | Ընդամենը | | 15 | 1499882 | | 1858306 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 67-Ա

**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2017ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի պահանջներով՝ ***Համայնքի ավագանին որոշում է.***

1.Հաստատել Կոտայքի մարզի «Առինջ համայնքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2017թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը, համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017թվականի հունվարի 1-ից:

3.Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2015թվականի դեկտեմբերի 3-ի« Առինջ համայնքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին » թիվ 43-Ա որոշումը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱՐՍԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
2.ԱՐԹՈՒՐ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ
3.ԳԱՅԱՆԵ ՊԱԼՅԱՆ
4.ԳՐԵՏԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
5.ԼԱՈՒՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ
6.ՆԵԼԼԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ
7.ՍԱՀԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
8.ՍԵՐՈԲ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
9.ՖԼՈՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

Հավելված
Առինջ համայնքի ավագանու 2016թվականի
դեկտեմբերի 8-ի N67-Ա որոշման

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ
## ԱՌԻՆՋԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
## 2017թ.

Աշխատակիցների թվաքանակը՝ 20

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելումը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 9 |
| 1 | Առինջի համայնքային տնտեսություն ՀՈԱԿ | Տնօրեն | | 1 | 170000 | | 170000 |
| 2 | | Հաշվապահ | | 1 | 140000 | | 140000 |
| 3 | | Գանձապահ | | 1 | 130000 | | 130000 |
| 4 | | Սանիտարական մաքրման տեսուչ | Տեխնիկական սպասարկման | 1 | 130000 | | 130000 |
| 5 | | Էլեկտրիկ -ջրող մեքենայի վարորդ | Տեխնիկական սպասարկման | 1 | 90000 | | 90000 |
| 6 | | Վարորդ աղբատար մեքենայի | Տեխնիկական սպասարկման | 2 | 150000 | | 300000 |
| 7 | | Վարորդ ինքնաթափ մեքենայի | Տեխնիկական սպասարկման | 1 | 150000 | | 150000 |
| 8 | | Բանվոր աղբատար մեքենայի | Տեխնիկական սպասարկման | 3 | 140000 | | 420000 |
| 9 | | Բանվոր ինքնաթափ մեքենայի | Տեխնիկական սպասարկման | 2 | 140000 | | 280000 |
| 10 | | Բանվոր առուներ մաքրող | Տեխնիկական սպասարկման | 1 | 90000 | | 90000 |
| 11 | | Բանվոր ջրագծերի և կոլլուղագծերի սպասարկման | Տեխնիկական սպասարկման | 1 | 100000 | | 100000 |
| 12 | | Մեխանիզատոր | Տեխնիկական սպասարկման | 1 | 100000 | | 100000 |
| 13 | | Հավաքարար | Տեխնիկական սպասարկման | 4 | 80000 | | 320000 |
| | | Ընդամենը | | 20 | 1610000 | | 2420000 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 68-Ա

## ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի $2^1$ կետի , Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասի , Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թվականի հունիսի 2-ի N631-Ն որոշմամբ կանոնադրության 12-րդ մասի դրույթներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի՝ ***Համայնքի ավագանին որոշում է.***

1.Ստեղծել Առինջ համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով
1/Հաստատել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի քանակական կազմը 7(յոթ) անձից:
2/Հաստատել հանձնաժողովի անհատական կազմը 7(յոթ) անձից:
3/ Հաստատել հանձնաժողովի անհատական կազմը՝
Ֆլորա Առաքելյան , ավագանու անդամ /համաձայնությամբ/
Գայանե Պայյան, ավագանու անդամ /համաձայնությամբ/
Սամսոն Սերոբյան, Աբովյանի ՍԾՏԳ մասնագետ /համաձայնությամբ/
Աննա Խուդավերդյան , համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /համաձայնությամբ/
Նելլի Մխիթարյան, ուսուցչուհի /համաձայնությամբ/
Աննա Բարսեղյան, աշխատակազմի քարտուղար /համաձայնությամբ /
4/Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նախագահ նշանակելՍամվել Մեսրոպյանին:

2.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2011թվականի ապրիլի 13-ի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին»թիվ 14-Ա որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱՐՍԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
2.ԱՐԹՈՒՐ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ
3.ԳԱՅԱՆԵ ՊԱԼՅԱՆ
4.ԳՐԵՏԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
5.ԼԱՈՒՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ
6.ՆԵԼԼԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ
7.ՍԱՀԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
8.ՍԵՐՈԲ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
9.ՖԼՈՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ
ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 69-Ն

## ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 53-րդ հոդվածի 2-րդ մասով՝***Համայնքի ավագանին որոշում է.***

1.Հաստատել Առինջ համայնքի 2017-2021թվականների զարգացման ծրագիրը, համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱՐՍԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
2.ԱՐԹՈՒՐ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ
3.ԳԱՅԱՆԵ ՊԱԼՅԱՆ
4.ԳՐԵՏԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
5.ԼԱՈՒՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ
6.ՆԵԼԼԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ
7.ՍԱՀԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
8.ՍԵՐՈԲ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
9.ՖԼՈՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 70-Ն

## *ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ԹԻՎ 48-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասին 3-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով.***Համայնքի ավագանին որոշում է՝***

1.Առինջ համայնքի ավագանու 2015թվականի դեկտեմբերի 21-ի «Կոտայքի մարզի Առինջ համայնքի 2016թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 48-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1/Հավելվածի հատված 2-ի 2111 տողի 6-րդ սյունակի «51324,0» թիվը փոխարինել «51724,0»թվով, 7-րդ սյունակի «50724,0»թիվը փոխարինել«51124,0»թվով:

1/Հավելվածի հատված 2-ի 2641 տողի 6-րդ սյունակի «16651,6» թիվը փոխարինել «18551,6»թվով, 7-րդ սյունակի «6400,0»թիվը փոխարինել«6900,0»թվով, 6-րդ սյունակի «10251,6»թիվը փոխարինել «11651,6»

2/Հավելվածի հատված 2-ի 2451 տողի 6-րդ սյունակի «51000,0» թիվը փոխարինել «49600,0»թվով, 8-րդ սյունակի «49000,0» թիվը փոխարինել «47600,0»թվով

3/Հավելվածի հատված 2-ի 3112 տողի 6-րդ և 7-րդ սյունակների «1200,0» թիվը «0» թվով

4/ Հավելվածի հատված 2-ի 3031 տողի 6-րդ և 7-րդ սյունակների «540,0» թիվը փոխարինել «840,0»թվով

5/Հավելվածի հատված 3-ի 4251 տողի 4251 հոդվածի 4-րդ և 5-րդ սյունակների «5400,0» թիվը փոխարինել «5900,0»թվով

6/Հավելվածի հատված 3-ի 4631 տողի 4726հոդվածի 4-րդ և 5-րդ սյունակների «540,0»թիվը փոխարինել «840,0»թվով

7/Հավելվածի հատված 3-ի 4771 տողի 4891հոդվածի «1200,0»թիվը փոխարինել «0»թվով

8/Հավելվածի հատված 3-ի5113 տողի 5113 հոդվածի 4-րդ և 6-րդ սյունակների «48671,6»թիվը փոխարինել«47271,6» թվով

9/Հավելվածի հատված 3-ի 5122 տողի 4-րդ և 6-րդ սյունակների «9100,0» թիվը փոխարինել«10500,0»

10/Հավելվածի հատված 6-ի 2641 տողի 4251հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակների՝«900,0»թիվը փոխարինել «1400,0»թվով,5122 հոդվածի «7400,0» թիվը փոխարինել «8800,0»թվով

11/Հավելվածի հատված 6-ի 3031 տողի 4726հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակների «540,0»թիվը փոխարինել «840,0»թվով
12/Հավելվածի հատված 6-ի 3112 տողի 4891 հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակների «1200,0»թիվը փոխարինել «0»թվով
Հավելվածի հատված 6-ի 2111 տողի 4111 հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակների «36620,0»թիվը փոխարինել «37020,0»թվով

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱՐՍԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
2.ԱՐԹՈՒՐ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ
3.ԳԱՅԱՆԵ ՊԱԼՅԱՆ
4.ԳՐԵՏԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
5.ԼԱՈՒՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ
6.ՆԵԼԼԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ
7.ՍԱՀԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
8.ՍԵՐՈԲ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
9.ՖԼՈՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 71-Ա

## ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով. ***Համայնքի ավագանին որոշում է՝***

1.Առինջ համայնքում աղբահանության աշխատանքները բարելավելու համար, համայնքի սեփականություն համարվող «ԳԱԶ-330900-1357-02» մակնիշի 305 LL 70 պետ համարանիշի ավտոմեքենան անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Առինջ համայնքային տնտեսություն » համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը;

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱՐՍԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
2.ԱՐԹՈՒՐ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ
3.ԳԱՅԱՆԵ ՊԱԼՅԱՆ
4.ԳՐԵՏԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
5.ԼԱՈՒՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ
6.ՆԵԼԼԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ
7.ՍԱՀԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
8.ՍԵՐՈԲ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
9.ՖԼՈՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ